ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Խաչատուր Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական

համալսարանի ռեկտոր, ՊՐՈՖԵՍՈՐ ՍԻՐԲՈՒՀԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ

3-ը մայիսի, 2023թ.

Կարծիք

Նռանե Բաբկենի Սարոյանի «Բանաստեղծական կայուն ձևերը 20-րդ դարի հայ պոեզիայում» թեմայով, ներկայացված Ժ. 01. 04 – «Գրականության տեսություն» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Ժամանակակից գրական գործընթացն առանձնանում է բանաստեղծական կայուն ձևերի նկատմամբ հետաքրքրությամբ, բայց մինչ օրս չկա ուսումնասիրություն, որը համապարփակ բնութագրի 20-րդ դարի հայ պոեզիայի կայուն բանաստեղծական ձևերը: Գոյություն ունեցող աշխատանքներում ներկայցվում են տարբեր բանստեղծների հեղինակած կայուն ձևերը կամ բանաստեղծական մեկ ձևի պատմությունը:

Ատենախոսության մեջ ընդգծվում են հայ պոեզիայի բանաստեղծական կայուն ձևերի ինքնատիպությունը, ներկայացվում են դրանց կառուցվածքային և բովանդակային առանձնահատկությունները: Այս տեսակետից Ն. Բ. Սարոյանի ատենախոսությունը խիստ արդիական է:

Ատենախոսության ուսումնասիրության առարկան է բանաստեղծական կայուն ձևերը 20-րդ դարի հայ պոեզիայում:

Աշխատանքի գիտական նորույթը: Հետազոտության մեջ ատենախոսը վերլուծում է կայուն բանաստեղծական ձևերը, առանձնահատուկ ուշադրություն դարձնելով կրկնվող բառին կամ արտահայտությանը, որը նպաստում է թեմայի

ամբողջական ըմբռնմանը և ռիթմի ուժգնացմանը (տրիոլետ, ռոնդո, քառյակ, գազել), ներկայացնում է հայ բանաստեղծների նախընտրած հանգերի տեսակները:

Ատենախոսության մեթոդաբանությունը հիմնված է Էդ. Ջրբաշյանի, Դ.Գասպարյանի, Մ.Լ.Գասպարովի, Ա. Ջրբաշյանի, Գ. Լևոնյանի, Հ. Թամրազյանի և այլ գրականագետների աշխատությունների վրա:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից (իրենց ենթագլուխներով), եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսության տեքստը շարադրված է 142 էջի վրա՝ ներառյալ օգտագործված գրականության ցանկը:

Ներածությունում կարևորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել է դրա ուսումնասիրվածության աստիճանը, ձևակերպվել են նպատակն ու խնդիրները, գիտական նորույթը, հիմնական արդյունքներն և դրանց գործնական նշանակությունը:

Առաջին գլխում («Սակավ հանդիպող բանաստեղծական կայուն ձևերը հայկական պոեզիայում»), որը ներառում է երկու ենթագլուխ, քննվում են հայ պոեզիայում հազվադեպ հանդիպող կայուն բանաստեղծական ձևերը՝ բալլադ, վիլլանել, ռոնդո, քասիդ, դիստիքոս, բեյթ, հոքու և թանկա, մոնոստիքոս, հայրեն, մուխամմազ:

Երկրորդ գլուխը («Հայկական պոեզիայում հաճախ հանդիպող բանաստեղծական կայուն ձևեր») բաղկացած է չորս ենթագլխից, որոնցում դիտարկված են՝ տերցետը, ութնյակը, տրիոլետը, հայկական քառյակը, գազելը: Ներկայացված են դրանց ծագումնաբանությունը, կառուցվածքային առանձնահատկություններն ու դրսևորումները հայ գրականության մեջ:

Երրորդ գլուխը («Սոնետը՝ որպես ամենատարածված բանաստեղծական կայուն ձև. պատմությունը եվ առանձնահատկությունները») բաղկացած է չորս ենթագլխից, որոնք վերաբերում են սոնետի տարածվածությանը և ենթատիպերին: Ներկայացված է սոնետի զարգացումը արևմտահայ և արևելահայ պոեզիայում: Քննարկվում են հայկական սոնետի թեմատիկ ընդգրկումները, համեմատվում են հայկական և դասական սոնետները:

Եզրակացություն բաժնում ներկայացվել են ատենախոսության հիմնական արդյունքներն և եզրահանգումները:

Ն. Սարոյանի ատենախոսությունը աչքի է ընկնում հմտորեն կատարած գրականագիտական վերլուծությամբ: Ատենախոսն իր ուսումնասիրության արդյունքներով հաստատում է հասուն գիտական գործունեություն ծավալելու ունակություն, ինչպես նաև կոնկրետ փաստերի, տվյալների ու սկզբնաղբյուրների հետ աշխատելու կարողություն, մեծածավալ գրականության մանրակրկիտ վերլուծության հմտություն:

Սեղմագիրը համապատասխանում է հետազոտության բովանդակությանը և արտացոլում է դրա հիմնական դրույթներն ու արդյունքները:

Ամփոփելով, կարելի է ասել, որ Ն. Սարոյանի ատենախոսությունը լուրջ գիտական աշխատանք է, որը կհետաքրքրի տարբեր բնագավառներում աշխատող գրականագետներին:

Աշխատանքը առավել կատարյալ տեսնելու համար կցանկանայինք նշել մի քանի դիտարկում.

- Խոսելով անգլիական սոնետի մասին ատենախոսը շատ հպանցիկ է անրադառնում շեքսպիրյան սոնետի ձևին և դրա ազդեցությանը հայ սոնետի վրա:
- Ատենախոսության մեջ մի քանի անգամ անդրադարձ է կատարվում Աշխեն Ջրբաշյանի ուսումնասիրություններին, բայց դրանցից ոչ մեկը նշված չէ գրականության ցանկում (տես էջ 6, 28, 30, 32, 41 և այլն): Գրականության ցանկում բացակայում է նաև Ի. Բեխերի հոդվածը (И.Р.Бехер Философия сонета, или Маленькое наставление по сонету /И. Р. Бехер// Вопросы литературы . – 1965 – №10. Стр. 190-208, տես էջ 83):
- Գրականության ցանկում առկա են աշխատություններ, որոնք արտացոլված չեն տողատակերում (տես օրինակ, գրականագիտական մենագրություններ՝ 1, 4, 7, 8, 21, 24, 69, 84 և

այլն, գեղարվեստական գրականություն՝ 6, 8, 10, 32, 33, 47, 65, 66 և այլն):

- Ներկայացնելով սփյուռքահայ սոնետը, ատենախոսը ավելի մեծ ուշադրություն է դարձնում սփյուռքահայ գրականության ձևավորմանը և թեմաներին, քան սոնետի կայուն ձևին (տես 98-100 էջ.):
- Սեղմագրում ատենախոսության վերնագիրը ռուսերեն թարգմանված է «Твердые стихотворные формы в армянской поэзии XX века», մեր կարծիքով, ավելի ճիշտ է հետևյալ թարգմանությունը՝ «Устойчивые стихотворные формы в армянской поэзии XX века»:
- Ատենախոսության մեջ հղումները տրվում են տողատակերում, այլ ոչ թե տեքստում, գրականության ցանկի համարը նշելով /տես՝ «Ատենախոսության ձեվավորման պահանջները» – https://www.bok.am/templates /:

Վերը նշվածն ամենևին չի նվազեցնում ատենախոսի կատարած ուսումնասիրության արժանիքները: Ուսումնասիրությունն առանձնանում է շարադրանքի հստակությամբ, նորույթի հիմնավորմամբ, եզրակացությունների ճշգրտությամբ: Ատենախոսությունը և սեղմագիրը շարադրված են հստակ գիտական ոճով, դրանց ձևավորումը համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից ներկայացվող պահանջներին:

Կարծում ենք, որ ատենախոսությունը բավարարում է ՀՀ ԲՈԿ-ի՝ բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճանի հայցման համար ներկայացվող պահանջները, ատենախոս Նոանե Բաբկենի Սարոյանը արժանի է Ժ. 01. 04 - «Գրականության տեսություն» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Ատենախոսությունը քննարկվել է և վերջինիս վերաբերյալ եզրակացությունը հաստատվել է Խաչատուր Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի արտասահմանյան գրականության ամբիոնի

2023 թվականի մայիսի 3-ի թիվ 12 նիստում՝ բ.գ.դ, պրոֆեսոր Ռ. Թադևոսյանի, բ.գ.թ., դոցենտ Կ. Խանյանի, բ.գ.թ., պրոֆ.պ. Ս. Նուրալովայի, բ.գ.թ., դոցենտ Ք. Բեջանյանի, բ.գ.թ., դոցենտ Ի. Սարկիսյանի մասնակցությամբ:

Արտասահմանյան գրականության ամբիոնի վարիչ

բ.գ.դ., պրոֆեսոր ՌՈՒԶԱՆ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Ռուզան Թադևոսյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ՀՊՄՀ գիտական քարտուղար, մ.գ.թ., դոցենտ ՄԱՐԻԱՄ ԻՍՊԻՐՅԱՆ

3-ը մայիսի, 2023թ.